

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

07.04.2020



Միրելի՛ մայրեր, կանայք, աղջիկներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ այսօր նշվող Մայրության եւ գեղեցկության տոնի կապակցությամբ:

Պատահական չէ, որ հենց Ապրիլի 7-ն է ընտրվել հայ մայրերին մեր խոնարհումը, սերն ու երախտագիտությունը հայտնելու համար. Հայ առաքելական եկեղեցին այն հռչակել է «Մայրերի եւ մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր», քանի որ այսօր նշվում է Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը:

Եվ չնայած մեր ներկա բարդ ժամանակաշրջանին, չենք մոռանում, որ բոլոր դժվարին իրավիճակներից հաղթանակած դուրս գալու գրավականը նաեւ հայ կնոջ զգոնությունն է, հոգատարությունն ու պատասխանատվությունը, որոնց կարիքն այսօր շատ ունենք:

Առանձնահատուկ շնորհավորանքներս ու բարեմաղթանքներս եմ հղում ներկայումս օրուգիշեր իրենց անխոնջ աշխատանքն իրականացնող մեր բուժաշխատող եւ մյուս ոլորտներում գործադրվող ճիգերի առաջամարտիկ կանանց:

Տոնի առիթով մաղթում եմ բոլորիդ համբերատարություն, խաղաղ ու հոգսերից զերծ օրեր, բարեկեցություն, մշտական գեղեցկություն ու ընտանեկան ջերմություն:

Եղե՛ք սիրված, գնահատված, առողջ եւ երջանիկ: